

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 29/5

18 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Լևոն Իրադյանի 14.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 26.04.2014 թ-ի թիվ 134 որոշման դեմ:

Ա/Ձ Լևոն Իրադյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ կողմից 26.04.2014 թ-ին կայացվել է թիվ 134 որոշումը, որով որոշվել է Ա/Ձ Լևոն Իրադյանից գանձել 371.399 դրամ որպես սոցվճարի պարտք: Որոշման բողոքարկման համար սահմանվել է վեցամսյա ժամկետ:

Ա/Ձ Լևոն Իրադյանը (այսուհետ նաև գանգատաբեր) գտնում է, որ որոշումն անհիմն է և պետք է վերացվի հետևյալ պատճառաբանությամբ.

1. 01.03.2001 թ-ին Տեսչություն է ներկայացվել դիմում, որով գանգատաբերը խնդրել է դադարեցնել անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը:

2. Իր մասով հաշվարկված «պարտավորությունները» 2009-2012 թ.թ. համար հաշվարկված սոցիալական ապահովության գծով պարտավորություններն են:

3. 11.11.2005 թ-ին ընդունվել է «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելա մասին» ՀՕ-215-Ն ՀՀ օրենքը, դրան հետևել է 21.08.2008 թ-ին ընդունված ՀՕ-151-Ն օրենքը «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելա մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված արտոնությունների կիրառման մասին», որի 1-ին հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության 2005 թվականի նոյեմբերի 11-ի ՀՕ-215-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված արտոնություններից օգտվելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատերերը, որոնք մինչև սույն օրենքն աժի մեջ մտնելը դեռևս չեն օգտվել այդ արտոնություններից, կարող են օգտվել Օրենքով իրենց վերապահված արտոնություններից՝ առանց ժամկետային սահմանափակման: Այնուհետև 28.12.2012 թ-ին ընդունվել է ՀՕ-258-Ն ՀՀ օրենքը «Հարկային և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելա մասին», որի 3-րդ հոդվածի համաձայն՝ անհատ ձեռնարկատերերն ազատվում են 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների (այդ թվում՝ հաշվարկված և չվճարված տույժերի) վճարումից:

Վերոգրյալի հիման վրա հայտնվում է, որ վիճարկվող որոշումն ընդունված է օրենքի խախտմամբ, քանի որ այն դեպքում, երբ գանգատաբերն օրենքի ուժով ազատվել է 2006 թվականի հունվարի 1-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը (ներառյալ) ընկած հաշվետու ժամանակաշրջանների համար հաշվարկված և

չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների վճարումից, արդեն իսկ չեղած պարտավորության վրա հաշվարկվել են նվազագույն սոցիալական ապահովության վճարները և տույժերը, ինչն ակնհայտ հակասության մեջ է մտնում ՀՕ-258-Ն օրենքի հետ և փաստորեն ստացված է, որ գանգատաբերը ծանրաբեռնվում է պարտավորությամբ ոչ թե օրենքի աժով, ինչպիսի պահանջ է դրված ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ոչ ոք չի կալուղ կրել պարտականությաններ, որոնք սահմանված չեն օրենքով, այլ՝ որոշմամբ, ինչն ակնհայտորեն հակասում է ՀՀ Սահմանադրության վերը բերված դրույթներին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի համաձայն անվավեր է առջինն չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ սխալ կիրառման կամ մեկնաբանման հետևանքով:

Փաստորեն, որոշումն ընդունվել է վերոգրյալ օրենքների և ՀՀ Սահմանադրության 5-րդ, 42-րդ հոդվածների պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 26.04.2014 թ-ի թիվ 134 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Լևոն Իրադյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը, 26.04.2014 թ-ին ընդունել է թիվ 134 որոշումը, որի համաձայն 18.04.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Լևոն Իրադյանի չկատարած հարկային պարտավորությունը կազմում է 371.399 դրամ, որից ապառք՝ 240.000 դրամ, տույժ՝ 131.399 դրամ: Պարտավորությունն առաջացել է 2009–2012 թ.թ.-ի ընթացքում՝ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարների, ինչպես նաև հաշվարկված տույժերի արդյունքում:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ մինչև 31.12.2012 թ-ը գործող «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն

սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Լևոն Իրադյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել ղեկավարվելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդումներին, որ օրենքի ուժով գանգատաբերն ազատվել է 2006 թ-ի հունվարի 1-ից մինչև 2008 թ-ի դեկտեմբերի 31 ընկած ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների վճարումից ու արդեն իսկ գոյություն չունեցող պարտավորության վրա հաշվարկվել են նվազագույն սոցիալական ապահովության վճարներ և տույժեր, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ վերոգրյալ օրենքով արտոնություններ են սահմանվել միայն 2006 թ-ի հունվարի 1-ից մինչև 2008 թ-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանների համար հաշվարկված և չվճարված պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարների համար, իսկ 2009 թ-ի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի համար պարտադիր սոցիալական ապահովության վճարների նվազագույն գումարները հաշվարկվել են հիմք ընդունելով «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթները:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ Էջմիածնի ՏՀՏ պետի 26.04.2014 թ-ի թիվ 134 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ
